Ի Գ.

Ով զիս կըտրատէ մորթէ կարկոծէ, իմ կէս հախըն չէ.
Աչերս ի՞նչ տեսաւ ի քեզ, որ իմ սիրտս ըզքեզ կու սիրէ:
Ոչ ունիմ համբերութիւն, որ լըսեմ սահաթ մի քենէ.
Հանցեղ եմ ի քո սիրուդ՝ զինչ ամառ ծաղիկն ի ջըրէ:

Ի Դ.

Պիտէր ինձ հազար մաքի, հազարին եաթաղն ապիկի.
Պիտէր ինձ հազար ջորի ու հազրին բեռնակն ալ ոսկի.
Պիտէր ինձ ծովեր գինի ու նաւերդ ինձ տօստօքանի.
Իմ եարն ալ իմ քովս ըլնար, խըմէաք տարեկ մի քանի:

ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա

Ա՛յ իմ մարգըրտէ շարոց, ոսկեթել ծածկոցդ ի վերայ,
Ձքո հայրըն պատիւ ձենեմ, քեզ ինձի կ'ուզեմ՝ թէ կուտայ:
–Կըտրի՛ճ, մի՛ անխելանար, թէ հազար ուզես՝ նա չիտայ.
Ծողըդ լի ոսկւով արա՛, եկո՛ մեր դուռըն խաղ արա՛,
Ձիմ հայրս պարտական արա՛, դու կանգնէ՛ զինչ քուրդ հաւալայ.
Ես իմ հօրըս հետ կըռուիմ, թէ՝ Գընա՛ պարտքիդ ճար արա՛.
Մայրըս քեզ բարձ դընէ, դու նըստիս զինչ բարձր ամիրայ,
Ձեռքըդ բըռնեմ ներս տանիմ, դուռն դընեմ՝ ըզփակն ի վերայ,
Ապրիշում խալի ձըգեմ, ոսկեթել դօշակն ի վըրայ,
Բարձիկ մ'ի սեղան բերեմ, որ խորված կաքաւն ի զըրայ,
Ձուզում իմ գինի բերեմ, որ խըմենք ի սիրոյ վըրայ:

Բ.

Ասի թէ սիրեմ ըզքեզ, դու ի քեզ ի նազն է՞ր ելար,
Քա՛ւ ալ թէ անցաւ աշխարհս, որ այլ տեղ չըայ սիրոյ ճար.
Երթամ մեկնիմ ա՛յլ սիրեմ որ աչուին ի քեզ նըմանի.
Ձանունըդ նոր դընեմ, որ լըսես՝ սի՛րտըդ նըւաղի:

Գ.

Թէ նուշի 'իր աչացս ելար, թէ շաքարն՝ անպիտանացար.
Թէ դուն՝ սիրելու խընձորն, ա՛լ իմ ա՛չքըս մի՛ երեւնար:
Երթամ սուրբ Սարգիս մըտնում, անիծեմ որ դուն իմանաս,
Ո՛չ կաղնաս ու ո՛չ կուրնաս, սարկարտան մընաս քան ըզիս: